ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » մարտի 2022թ. N ՄՈ/195-2022

Ք. Արմավիր

«ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2022 թվականի հունվարի 17-ի N Ե/01/76-22 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 25-ի N 259 գրությունը և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2022 թվականի փետրվարի 17-ի եզրակացությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման շինարարական աշխատանքներն սկսելու հիմքով «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքն ազատելու պատճառով.

որոշում եմ՝

1. «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության բնականոն աշխատանքերի կազմակերպումն իրականացնել Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող Փարաքար գուղի Իսահակ Գասպարյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Փարաքարի հիմնական դպրոցի նախկին վարչական շենքում:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3/24/2022

VERIFIED OCSP 3/24/2022 15:43:18 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ